

ՀՏԴ 94(479.25)

Պատմություն (ազգագրություն)

Հարություն Մարության
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր, hmarutyun@yahoo.com

Հարություն Մարության
ՓՐԿԻՉԻՑ ՄԻՆՉԵՎ ՊԱՏԺԻՉ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱՆԱԿԸ
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՑՈՒՑԱՊԱՍՏԱՌՆԵՐՈՒՄ

Ղարաբաղյան շարժման տարիներին (1988 փետրվար – 1990 օգոստոս), ի հետևանս Հայկական ՄՍՀ-ում և ԼՂԻՄ-ում խորհրդային զորամիավորումների պատժիչ գործողությունների, հայության վերաբերմունքը խորհրդային բանակի և, մասնավորապես, ռուս զինվորի մասին արմատական փոփոխություն կրեց, «փրկիչի» կերպարն իր տեղը զիջեց «պատժիչի» կերպարին: Այս հենքին աստիճանաբար գիտակցվեց սեփական՝ հայկական բանակ ունենալու անհրաժեշտությունը: Պատկերացումների և ինքնության փոփոխության ընթացքը ցույց է տրվում Շարժման տարիների ցուցապաստառների վերլուծությամբ:

Բանալի բառեր. Ղարաբաղյան շարժում, ցուցապաստառ, խորհրդային զորք, խորհրդային զինվոր, ռուս զինվոր, վերաբերմունք, փրկիչ, պատժիչ:

Арутюн Марутян
ОТ СПАСИТЕЛЯ ДО КАРАТЕЛЯ: СОВЕТСКАЯ АРМИЯ В ПЛАКАТАХ И ТРАНСПАРАНТАХ
КАРАБАХСКОГО ДВИЖЕНИЯ

В годы Карабахского движения (февраль 1988 – август 1990), вследствие карательных акций советских военных формирований, отношение армянского народа к советской армии и, в частности, к русскому солдату, претерпело кардинальные изменения, в результате чего образ «спасителя» уступил место образу «карателя». На этом фоне постепенно была осознана необходимость создания собственной – армянской армии. Процесс изменения представлений и идентичности показан при помощи анализа транспарантов и плакатов Движения.

Ключевые слова: Карабахское движение, транспаранты и плакаты, советская армия, советский солдат, русский солдат, отношение, спаситель, каратель.

Harutyun Marutyun
Dr. Habilitation (History), Social/Cultural Anthropologist,
IREX/RSEP, Fulbright, USHMM/CAHS, DAAD Alumni,
Head Researcher of Institute of Archaeology and Ethnography,
National Academy of Sciences, Armenia,

**FROM SAVIOR TO CHASTENER: THE SOVIET ARMY IN POSTERS AND BANNERS OF
THE KARABAGH MOVEMENT**

The image of the “savior” give way to the image of “chastener” thanks to the cardinal changes in the attitude of the Armenian people towards the Soviet army and, in particular, towards Russian soldier, because of the punitive actions of the Soviet army units in the years of the Karabagh Movement (February 1988 – August 1990). These changes step by step brought to realizing of the necessity of creation of the own, Armenian army. The process of changes of perceptions and identity is shown through the analysis of the posters and banners of the Karabagh Movement.

Key words: Karabagh Movement, posters and banners, Soviet army, Soviet soldier, Russian soldier, attitude, savior, chastener.

Ազգային ինքնության ձևափոխման վրա ազդող գործոնների թվում կարևորագույն տեղ ունեն քաղաքական ու ռազմական ակցիաները, մասնավորապես քաղաքական գործիչների հայտարարություններն ու զինված ուժերի տարաբնույթ գործողությունները: Այդպիսի հանգամանքներով

պայմանավորված ինքնության փոփոխությունները հատկապես պարզորոշ են դրսևորվում և ունենում են, որպես կանոն, համեմատաբար արագ ընթացք հասարակության համար ճգնաժամային իրավիճակներում, որպիսին էր, օրինակ, Ղարաբաղյան շարժումը (1988 թ. փետրվար – 1990 թ. օգոստոս): Այդ տարիներին, պայմանավորված Կենտրոնի՝ ԽՄԿԿ և ԽՍՀՄ ղեկավարության, խորհրդային բանակի գործողություններով՝ ի թիվս այլ փոփոխությունների, արմատապես վերափոխվեց հայության հանդեպ ռուս ժողովրդի և ռուս զինվորի փրկարար դերի վերաբերյալ դարերի պատմություն ունեցող հավատը: Ինքնության ձևափոխման աստիճանական գործընթացը հատկապես պարզորոշ է դրսևորվում Շարժման պատկերագրության մեջ: Ցուցապատառներն անմիջապես արձագանքում էին իրադարձություններին, տալիս ժողովրդի տրամադրությունների, երբեմն և քաղաքական որոշակի ուժերի գնահատականների պատկերը:¹

Ընդհանրապես, «ուրիշի» կերպարը կարող է ունենալ դրական, չեզոք և բացասական հատկանիշներ: Ստորև բերվող ուսումնասիրությունը, կարծում եմ, ցույց է տալիս, թե ինչպես են որոշակի պայմանների ազդեցության տակ, մասնավորապես հակամարտության իրավիճակում, բացասական հատկանիշները վերաճում գրեթե «թշնամու» կերպարի: Նկատենք, որ այդպիսի կերպարները՝ իրական թե մտացածին, դառնում են ազգային համախմբման խթանիչներ:

Եթե շուրջ 300 տարվա պատմություն ունի հայոց՝ ռուսական կողմնորոշումը, ապա ավելի քան 150 տարվա՝ ռուս զինվորի փրկարար դերի մասին պատկերացումների համակարգի ձևավորումը: Դրա լավագույն ձևակերպումը, որին ուղենիշային իմաստ հաղորդվեց խորհրդային իշխանության տարիներին, իր ժամանակին տվել է հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանը «Վերք Հայաստանի» վեպում. «Օրհնվի՛ էն սիսթը, որ ուսի օրհնած ոտը Հայոց լիս աշխարհը մտավ ու դղբաշի անիծած, չար շունչը մեր երկրիցը հալածեց: Քանի որ մեր բերնումը շունչ կա, պետք է զիշեր-ցերեկ մեր քաշած օրերը մտքըներս բերենք ու ուսի երեսը տեսնելիս՝ երեսներիս խաչ հանենք, աստծուն փառք տանք, որ մեր աղոթքը լսեց, մեզ ռուս թագավորի հզոր, աստվածահաստատ ձեռի տակը բերեց»:²

*

1988 թ. մարտի 22-ին խորհրդային գորամիավորումներն առաջին անգամ հայտնվեցին Երևանում. Լենինի (ներկայում՝ Մաշտոցի) պողոտայով անցան գրահամերթնաներ, իսկ ուղղաթիռներն ակոսում էին երկինքը: Հաջորդ օրը Կենտրոնի ուղարկված գորամիավորումները շրջափակեցին փետրվարյան հանրահավաքների անցկացման վայրը՝ Օպերայի հրապարակը, որտեղ երեք օր անց նախատեսվում էր նոր հանրահավաք: Մարդկանց առաջին ռեակցիան բարյացակամության և հումորի տարրեր էր պարունակում. հայուհիները փորձում էին գրուցել շեկլիկ զինվորների հետ, կոնֆետ ու գարնանային ծաղիկներ էին տալիս, երեխաները պաղպաղակ էին հյուրասիրում զինվորքեռիներին: Տասնմեկերորդ կարմիր բանակի երբեմնի մարտիկ-ծերուկները սրամտում էին, թե «չմեռանք, տասներկուերորդ Կարմիր բանակի մուտքն էլ տեսանք», ուղղաթիռները բնութագրվում էին իբրև «վերակառուցման առաջին ծիծեռնակներ», իսկ լենինականցիներն էլ հումորով նկատում էին, թե «Երևանի օդն այնքան աղտոտ է, երևանցիները որոշել են օդափոխիչներ կախել երկնքից»: Հայտնվեց սև հումորախառն հայտարարություն՝ «*Осторожно, в городе красные*» («Զգույշ, քաղաքում կարմիրներն են»), թերևս ստեղծված «Անոթասլի վրիժառուները» ֆիլմի համապատասխան ձևակերպման հիման վրա: Չհապաղեց նաև «Ղարաբաղ» կոմիտեի քաղաքական պատասխանը. մարտի 26-ին նախատեսված հանրահավաքի փոխարեն Երևանը հայտարարվեց «մեռյալ քաղաք»:³

Հաջորդող իրադարձություններում, սակայն, պայմանավորված խորհրդային գորամիավորումների գործողություններով, մարդկանց վերաբերմունքն ու գնահատականներն արդեն այլ բնույթ ունեին: Այսպես, 1988 թ. հուլիսի 5-ին՝ «Զվարթնոցի դեպքերի» ժամանակ, խորհրդային զինվորները դաժան ծեծի ենթարկեցին Երևանի «Զվարթնոց» օդանավակայանի խաղաղ ցուցարարներին:⁴ Իրադարձությունների շուրջ բազմաթիվ վկայություններում շեշտվում էր հատկապես այն

¹ Մանրամասն տե՛ս *Հարություն Մարության*, Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1.

Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Երևան, 2009:

² *Խաչատուր Աբովյան*, Վերք Հայաստանի Ողբ հայրենասերի, Երևան, 1981, էջ 119:

³ Տե՛ս *Մլվարդ Պետրոսյան*, Արցախյան քրոնիկոն. 2. – Գարուն, 1988, թիվ 6, էջ 68: *Mark Malkasian*, “Gha-rabagh!”: The Emergence of the National Democratic Movement in Armenia. Detroit, 1996, էջ 63:

⁴ Մանրամասն տե՛ս *К событиям в аэропорту “Звартноц” 4-5 июля, 1988 г. Ереван, Комитет Карабахского движения в Армении, с. 1-30 (рукопись)*. Դեպքերի պաշտոնական գնահատման մասին տե՛ս, օրինակ. *С.*

հանգամանքը, որ մարդիկ զարմացած և ապշած էին խորհրդային զինծառայողների դաժան և անմարդկային վերաբերմունքից անպաշտպան քաղաքացիների նկատմամբ. զինվորները հաշվի չէին առնում պասիվ վիճակում գտնվող, դիմադրության փորձ իսկ չանող ցուցարարների տարիքը, սեռը, հարվածում էին մահակներով, վահաններով մարդկանց գլխին, մարմնին, նետում էին գետնին, ծեծում էին ոտքերով, հայհոյում էին, թույլ չէին տալիս շտապ օգնության մեքենաներին դուրս հանել արյունվա վիրավորներին, ուշագնաց կանանց ու երիտասարդներին, ծեծում էին վարորդներին, կրակում էին ոչ միայն օդ, այլ նաև մարդկանց վրա... Արդյունքում բազմաթիվ մարդիկ տարբեր աստիճանի վնասվածքներ ստացան, զոհվեց զինվորների վայրագությունները լուսանկարել փորձող Խաչիկ Զաքարյանը:¹

Տեղի ունեցավ նաև մեկ ուրիշ, ոչ պակաս նշանակալից բան. մարդիկ տեսան խորհրդային զինվորականի մեկ այլ դեմքը, որը հրաման կատարելուց ուշադրություն չի դարձնում դիմացիների անպաշտպանվածության, տարիքի, սեռի, ազգության վրա: Արդյունքում սասանվեց հավատը խորհրդային և մասնավորապես «ռուս ազատարար և մարդասեր զինվորի»՝ տասնամյակներ շարունակ մատուցվող և հայոց մեջ դարերի ավանդույթով կաղապարված կերպարի հանդեպ: Հայ-ռուսական բարեկամության հանդեպ ունեցած անսահման հավատի կորստյան վտանգի մասին էր շեշտվում նաև դեպքերին հաջորդող աշխատանքային բազմաթիվ կոլեկտիվների ժողովների որոշումներում: Կարելի է ասել, որ Զվարթնոցի դեպքերն ունեցան շրջադարձային նշանակություն և իրենց ազդեցությամբ հավասարազոր էին 1905 թ. հունվարի 9-ի «Արյունոտ կիրակիի» իրադարձություններին,² և թերևս պատահական չէր, որ հուլիսի 8-ին Օպերայի հրապարակում կայացած հանրահավաքի ժամանակ հուլիսի 5-ի իրադարձությունները հայտարարվեցին որպես «Արյունոտ երեքշաբթի»:³ Արդեն իսկ Խաչիկ Զաքարյանի թաղման ժամանակ կազմակերպված բազմահազարանոց սգո երթին հայտնվեց «Убийцы – вон из Армении» («Մարդասպաններ, դուրս Հայաստանից») մակագրությամբ տրանսպարանտը (նկ. 1), մեկ այլ պլակատում պատկերագրորեն ցույց էր տրվում, թե ինչպես են խորհրդային մուրճն ու մանգաղը աստիճանաբար ձևափոխվում ֆաշիստական կեռիսաչի, իսկ կողքն էլ մակագրված էր՝ «Вот это перестройка» («Այ սա՛ է վերակառուցումը») (նկ. 2), երրորդ պլակատում «Гласность»-ը («Հրապարակայնություն») ներկայացվում էր բանտային ճաղերի մեջ առնված⁴ (նկ. 3):

Այն փաստը, որ նմանատիպ բնույթի ցուցապատատոներ հայտնվեցին նաև մի քանի ամիս անց, արդեն ոչ զգացմունքային հողի վրա, արդեն իսկ վկայում էր խորհրդային և ռուս զինվորի նկատմամբ վերաբերմունքի կայուն փոփոխության գործընթացի, Շարժման՝ հակախորհրդային ուղղվածություն ձեռք բերելու և ընդհանրապես հակամարտությունը Հայաստանի ու Կենտրոնի միջև տեղափոխվելու մասին: Այսպես, նման գնահատականի յուրօրինակ ձև է առկա ստորև դիտարկվող երեք ցուցապատատոներում՝ «Это же наши дети. Бухенвальдце, Освенце, Хатынь – Обмен опыта – Сумгаит, Масис, Звартноц, Шуша, Степанакерт...» («Չէ որ սրանք մեր երեխաներն են. Բուխենվալդե, Օսվենցեմ, Խատին – Փորձի փոխանակություն – Մուսգայիթ, Մասիս, Զվարթնոց, Շուշի, Ստեփանակերտ...») (18 նոյեմբերի 1988 թ.) (նկ. 4), «Достижение отечественной геноцидонавтики» («Հայրենական ցեղասպանագնացության նվաճումը») (24 նոյեմբերի 1988 թ.) (նկ. 5), «3 ժամյա ուշացում» (28 փետրվարի 1989 թ.): Դիտարկենք սրանք առանձին-առանձին:

*

Առաջին պլակատում «Это же наши дети» գրության ներքո պատկերված է ֆաշիստ-էսէսականի և խորհրդային ներքին զորքերի զինծառայողի ձեռքսեղմում, որից արյուն է կաթում: Էսէսականի դաստակին համապատասխան խորհրդանշան է պատկերված, տակը՝ փոքր շրջանակի մեջ ներառնված ֆաշիստական կեռիսաչ, խորհրդային զինծառայողի բազկապատին գրված է «BB» (այսինքն՝ Внутренние войска – ներքին զորքեր), ներքևում նկարված է մարդկանց պատկերացմամբ

Բաբլյան. Обстановка остается сложной. – Известия, 7 июля 1988 г., N 189 (22361); Выступление первого секретаря ЦК КП Армении С. Г. Арутюняна по Армянскому телевидению 9 июля 1988 г. – Коммунист, 10 июля 1988 г., 162 (16441); ՄՄՀՄ դատախազության հաղորդումը. – Սովետական Հայաստան, 13 հուլիսի 1988 թ., թիվ 165 (20486):

¹ Նրա մասին տե՛ս Գրիգոր Զանիկյան, Նահատակի փշեպսակը. – Գարուն, 1988, թիվ 8, էջ 34-36:

² Հմմտ. Дмитрий Сабов. Семь дней в Ереване: одна нерабочая неделя столицы Армении глазами нашего корреспондента. – Собеседник, август 1988 г., N 32 (233), с. 12, 13.

³ Տե՛ս Երկաթե շերեփ, 1988, յուլիս, թիվ 14, էջ 43: Mark Malkasian, նշվ. աշխ., էջ 102:

⁴ Տե՛ս Մայիս Վարդանյան, Սկիզբ. Երևան 1988 (լուսանկարների ալբոմ), Շարժա, 1998, էջ-լուսանկարներ 54-56:

թուրք/ադրբեջանական ինքնությունը ցուցող խորհրդանիշը՝ կիսալուսին և աստղ: Էսէսականի դաստակից ծայրն արյունոտ ոստիկանական մահակ է կախված, խորհրդային զինծառայողի դաստակից՝ նույնպես արնաներկ և արյուն կաթող (ինչը թերևս խորհրդանշում է դրա՝ վերջին ժամանակներս օգտագործման մեջ լինելու հանգամանքը) սակրավորի բահ (саперная лопата),¹ որն ընդհանրապես մաս է կազմում զինվորական հանդերձանքի և նախատեսված է փոքր, անհատական օգտագործման դիրք փորելու, նաև ականազերծման համար:

Արդ, ինչո՞վ էր պայմանավորված նման համադրումը և ինչո՞ւ հենց 1988 թ. նոյեմբերին: Նախ հիշենք, որ Էսէսը գերմանական ֆաշիզմի գլխավոր հենարանը համարվող կազմակերպություններից էր, մասնավորապես նրա կազմում էին գտնվում համակենտրոնացման ճամբարների (որոնք փաստորեն նվաճված ժողովուրդների նկատմամբ իրականացվող ցեղասպանության գործիք էին) հսկողությունը և կալանավորների նկատմամբ հաշվեհարդար իրականացնող հատուկ ստորաբաժանումները, ինչպես նաև անվտանգության ծառայության մարմինները (հետախուզություն և հակահետախուզություն): Էսէսը Գերմանիայում և գրավված տարածքներում իրականացվող զանգվածային տեռորի գլխավոր ուժն էր: Պատերազմի ավարտից հետո Նյուրնբերգյան դատավարության կողմից այն դատապարտվեց որպես հանցագործ կազմակերպություն: ԽՍՀՄ ներքին գործերը Ներքին գործերի նախարարության բաղկացուցիչ մասն էին կազմում: Նրանք կոչված էին պահպանելու պետական օբյեկտները, ինչպես նաև կատարում էին այլ բնույթի մարտական խնդիրներ, մասնավորապես Հայրենական մեծ պատերազմի տարիներին կոչված էին պաշտպանելու ռազմաճակատների և բանակների թիկունքը, ազատագրված բնակավայրերում կայազորային ծառայություն էին իրականացնում, մասնակցում էին թշնամական հետախուզական ծառայությունների վնասազերծմանը:

Էսէսականի ձեռքի ներքո գրված են համակենտրոնացման ճամբարների և բնակիչներով հանդերձ հրդեհի մատնված գյուղի անուններ: Հիշենք, որ գերմանական Վեյմար քաղաքի մերձակայքում գտնվող Բուխենվալդ (այլ ոչ Բուխենվալդե, ինչպես որ է պլակատում) համակենտրոնացման ճամբարում Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ոչնչացվեց 56 հազ. բանտարկյալ, օկուպացված Լեհաստանի տարածքում ստեղծված Օսվենցիմ (այլ ոչ Օսվենցեմ, ինչպես պլակատում է) ճամբարում՝ 4 մլն մարդ, իսկ ֆաշիստների կողմից գրավված Բելոռուսիայի Մինսկի շրջանի Խատին գյուղը ամբողջովին ոչնչացվեց իր 149 բնակիչներով հանդերձ:

Խորհրդային ներքին գործերի զինծառայողի ձեռքի տակ գրված վայրերի անունները պլակատի տրամաբանությամբ վերոհիշյալ ճամբարների և ոչնչացված գյուղի *համարժեքներն են թերևս որպես երևույթ*, քանզի քանակական առումով դրանք անհամատեղելի են:

Սուսկայիթում տեղ գտած իրադարձությունները հայտնի են: Այստեղ ավելացնենք պլակատի տրամաբանությունից բխող հետևյալ ինֆորմացիան. բանն այն է, որ երեք օր շարունակ Սուսկայիթում մոլեգնող ջարդերին և ավերածություններին գրեթե լիովին անհաղորդ մնացին տեղի իրավապահ մարմինները ու, մասնավորապես, միլիցիան, որը բնավ օգնության չէր շտապում իրեն դիմող անպաշտպան քաղաքացիներին, գալու դեպքում էլ ոչ թե փորձում էր ուժ գործադրելով սաստել ամբոխին, այլ դիտորդի դեր էր ստանձնում կամ էլ պարզապես հեռացնում էր հայերին իրենց թալանված բնակարաններից, անգամ չէր խորշում ինքն էլ մի բանից օգտվելու, ռուս զինվորականների բռնած և իրենց հանձնած ավազակներին մի քանի ժամ անց ազատ էր արձակում, երբեմն էլ ինքն էր հրահրում վարանող սուսկայիթցիներին մասնակցելու անօրինական գործողություններին ու այդպիսով նպաստում ջարդարարների շրջանում անպատժելիության զգացումի ամրապնդմանը:²

¹ Ճակատագրի քմահաճույքով 1989 թ. ապրիլի 8-9-ի գիշերը Թբիլիսիում հանրահավաքի մասնակիցներին ցրելու համար ներքին գործերի նախարարության ստորաբաժանումները օգտագործեցին ինչպես մահակներ, այնպես էլ սակրավորի բահեր, որոնց զոհ դարձան շուրջ երկու տասնյակ խաղաղ բնակիչներ: Տե՛ս, օրինակ. К обстановке в Тбилиси. – Известия, 10 апреля 1989 г., N 100 (22638); *Յուրի Անստ*, Թբիլիսիի ողբերգական գիշերը. – Գարուն, 1989, թիվ 4, էջ 42-43:

² Ակնարկում այս մասին տե՛ս, օրինակ. *Владимир Ларин, Юрий Макарецев*. Тревожные дни. – Собеседник, N 15, апрель 1988 г., с. 12; *Иван Подсвилов*. В переломной ситуации. – Правда, 7 мая 1988 г., N 128 (25480). Մանրամասն տե՛ս. С. *Желтов*. В Верховном Суде СССР. Свидетели дают показания. – Коммунист, 25 октября 1988 г., N 252 (16531); *Настал ли час расплаты?* – Коммунист, 30 октября 1988 г., N 256 (16535); *Сумгаит... Геноцид... Гласность?*, с. 22-24, 28, 31, 32; *Сумгаитская трагедия*. Մոտավորապես նույնատիպ իրավիճակ էր Բարվի հայերի նկատմամբ 1988 թ. նոյեմբերին: Տե՛ս. *Ս. Բ. Լեբեդ*, Ցավ վասն տերության, Երևան, 1997, էջ 200-202:

Ավերածությունների ծավալը, ինչպես նաև զոհերի թիվը կարող էր էապես ավելի քիչ լինել, եթե սկզբից նեթ Սումգայիթում տեղակայված զորամիավորումների կողմից ցուցաբերվեր վճռակա-նություն: Բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ ջարդերին ու կոտորածներին ականատես զինվորականները ոչինչ չէին ձեռնարկում՝ պատճառաբանելով, թե չունեն համապատասխան հրա-ման:¹

Վերն արդեն անդրադարձանք «Զվարթնոց» օդանավակայանում տեղ գտած դեպքերին: Այս-տեղ նկատենք, որ իրադարձությունների հետագա մեկնաբանման բնույթը կենտրոնական մամու-լում և հեռուստատեսությամբ ոչ միայն քաղաքական շրջանակներում, այլև շարքային մարդկանց մեջ այն համոզմունքը ստեղծեց, որ այս քայլով «Կենտրոնը» ցանկանում էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունում հուլիսի 18-ին կայանալիք ԼՂԻՄ-ի հարցի քննարկումից առաջ վե-րականգնել հայկական և ադրբեջանական կողմերի միջև Սումգայիթից հետո առկա «ասիմետ-րիան»: Մասնավորապես, փաստերի խեղաթյուրմամբ և ցինիկ մեկնաբանությամբ աչքի ընկավ Կենտրոնական հեռուստատեսությամբ հուլիսի 14-ին ցուցադրված և հաջորդ օրը կրկնված հեռուս-տալրագրող Բարիշնիկովի հաղորդումը, որտեղ նաև շեշտադրվում էր հայերի կողմից խորհրդային զինվորականներին մարմնական ծանր վնասվածքներ պատճառելու (ընդհուպ մինչև արյունվա ա-նելը) հանգամանքը: Ահա այս էլ հիմք էր տվել ԽՄԿԿ բարձրագույն ղեկավար Միխայիլ Գորբաչո-վին հուլիսի 18-ի նիստին բացականչելու, թե ինչպես են հայերը համարձակվել ձեռք բարձրացնել խորհրդային զինվորականների նկատմամբ, չէ՞ որ նրանք մեր երեխաներն են՝ «это же наши дети!»:

Բնութագրական է, որ նիստի վերաբերյալ մամուլում ներկայացված տեքստում այդ ռեպլիկը բացակայում է, փոխարենը Մ. Գորբաչովի ելույթում հիշատակվում էր «իսկ չէ՞ որ դա մեր բանակն է, որ հիմա այնտեղ [Երևանում] ներկա է հանուն բարձրագույն շահերի» հատվածը: Նույն կերպ և բացակայում էր «գորքերն ուշացան ընդամենը 3 ժամով» ռեպլիկը, փոխարենը ելույթի տեքստում ներկայացված էր «չէ՞ որ բառացիորեն կես գիշերվա չափով, մի քանի ժամով ուշացանք (իսկ այդ ա-մենը սկսվեց գիշերը) և ամենը ինչպիսի ողբերգական հետևանքներ ունեցավ Սումգայիթում» հատ-վածը:²

Այս որակումը չլրիպեց մարդկանց ուշադրությունից և բազմիցս օգտագործվեց ինչպես բա-նավոր ելույթներում, մամուլի հրապարակումներում, այնպես էլ կարելի է ասել անմիջապես, մի քանի օրվա ընթացքում իր դրսևորումը գտավ ցուցապաստառներում: Այսպես, 1988 թ. հուլիսին Օ-պերայի հրապարակում փակցված էր մի գունազեղ պլակատ (նկ. 6), որտեղ կարմիր հիմնագույնին նկարված էր մանկական սայլակ, միջի երեխայի փոխարեն պատկերված էր տանկ, որի վերնամա-սում (թերևս հետագայում) թղթե ծաղիկ էր ամրացված: Պլակատի ստորին աջ անկյունում թևավոր խոսք դարձած գորբաչովյան արտահայտությունն էր՝ «это же наши дети»: Նմանատիպ մեկ այլ պլակատ մեզ հանդիպեց 1988 թ. նոյեմբերի 7-ի «Չքերթի» ժամանակ. այստեղ ևս սայլակի մեջ տանկ էր դրված ու գորբաչովյան մեջբերումն էր (նկ. 7):

Ինչո՞վ էր պայմանավորված Շուշիի և Ստեփանակերտի առկայությունը դիտարկվող պլակա-տում: Սեպտեմբերի 18-ի Խոջալուի դեպքերին³ հաջորդեցին Շուշիի հայ բնակիչների տների և Ստե-փանակերտի ադրբեջանցիների տների հրդեհումը: Հրդեհվեց ավելի քան 30 տուն:⁴ Հաջորդող մի քանի օրվա ընթացքում Շուշիի իրենց թալանված ու հրդեհված տները լքեցին քաղաքում բնակվող գործնականում բոլոր հայերը, Ստեփանակերտից էլ հեռացան կենտրոնական թաղերում բնակվող

¹ Մանրամասն տե՛ս Սումգայիթ... Геноцид... Гласность? (составители: Г. Б. Улубабян, С. Т. Золян, А. А. Аршакаян), Ереван, 1989, с. 46, 48, 50-51, 58-59; Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев. Книга первая (Составитель, ответственный редактор: Самвел Шахмурадян). Ереван, 1989.

² Տե՛ս. ՄՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի ելույթը. – Գրական թերթ, 22 հուլիսի 1988 թ., թիվ 30 (2398):

³ Մանրամասն տե՛ս В. Б. Арутюнян. События в Нагорном Карабахе: Хроника. Часть I (февраль 1988 г. – январь 1989 г.). Ереван, 1990, с. 139-141. *Լևոն Մելիք-Շահնազարյան*, Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երևան, 1998, էջ 48-50: Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների շուրջ. – Սովետական Հայաստան, 20 սեպտեմբերի 1988 թ., թիվ 228 (20549): *Վահագն Դավթյան*, Բողոքում ենք. – Սովետական Հայաստան, 21 սեպտեմբերի 1988 թ., թիվ 229 (20550): Սումգայիթ... Геноцид... Гласность?, с. 49. *Բազրատ Ուլուբաբյան*, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997, էջ 87:

⁴ Տե՛ս В. Б. Арутюнян. События в Нагорном Карабахе: Хроника. Часть I, Ереван, 1990, с. 140, 141.

ադրբեջանցիները: Արդյունքում սեպտեմբերի 21-ին ԼՂԻՄ-ի և Ադրամի շրջանի տարածքներում մտցվեց հատուկ դրություն, և հաստատվեց պարետային ժամ:

Ստեփանակերտում զինվորները օրվա ընթացքում, դեռ մինչև պարետային ժամը անց էին կացնում փաստաթղթերի բազմաթիվ անհիմն ստուգումներ, շատ դեպքերում թույլ էին տալիս կոպտություններ հատկապես կանանց նկատմամբ, երբեմն պարզապես ծեծում էին մարդկանց այն աստիճան, որ նրանք ստիպված բժշկական օգնության էին դիմում: Պարետային ժամից հետո զինվորականները բնակիչներին ստիպում էին անջատել տների լույսն ու հեռուստացույցը, արգելում էին անգամ օգտվել բակերում գտնվող սանհանգույցներից և ջրի ծորակներից, հայեցում էին ոչ միայն առանձին քաղաքացիների, այլև անպարկեշտ արտահայտություններ էին գործածում հայ ժողովրդի նկատմամբ, խոստանում էին այնպես անել, որ «հայերը կամավոր գրկախառնվեն ադրբեջանցիների հետ»:

Նոյեմբերի կեսերին՝ Խաչին տափի (Թոփխանա) շուրջ Ադրբեջանում նոր թափ առած հակահայկական տրամադրությունների հենքին՝ ԽՍՀՄ ՆԳՆ ստորաբաժանումները և դեսանտայինները ստեփանակերտցիներին նկատմամբ հերթական անգամ ուժ կիրառեցին՝ օգտագործելով մահակներ և սակրավորի բահեր:¹

Այսպիսով, դիտարկված պլակատն իր գնահատականներով շարունակում է զվարթնոցյան դեպքերով սկսված և աշնանային իրադարձությունների շնորհիվ նոր որակ ստացած խորհրդային և ռուս զինվորի մասին ունեցած կերպարի ձևափոխման գործընթացը: Մակայն այս պլակատով կարծես թե առաջին անգամ խորհրդային զինվորն իր գործելակերպով ուղղակիորեն համեմատության մեջ էր դրվում խորհրդային ժողովրդին ամենածանր մարդկային կորուստներ և ավերածություններ պատճառած գերմանական ֆաշիստի/եսեսականի հետ, ու այդպիսով կարծես ավելի ծանրակշիռ էր դարձնում խորհրդային երկրի ներսում կարգուկանոնի համար, սոււմգայիթյան և համանման ձեռագրով իրականացված մյուս իրադարձությունների համար պատասխանատվության մեծ բաժին ունեցող ներքին գործերին տրվող գնահատականը: Մա արդեն ապտակ էր խորհրդային գաղափարախոսությանը, խորհրդային կարգերին ընդհանրապես և նշան այն բանի, որ Ղարաբաղյան շարժումը նաև հակախորհրդային ուղղվածություն ձեռք բերելու որակական փոփոխությունների եզրին է:² Ինչպես ասում են, «արձագանքները չստիպեցին իրենց երկար սպասել»՝ նոյեմբերի 24-ին Երևանում հայտարարվեց արտակարգ դրություն, և մտցվեց պարետային ժամ:

*

Երկրորդ պլակատը (նկ. 5) մեջտեղ եկավ այն ժամանակ, երբ ժողովրդավարական զարգացումները Հայաստանում բերեցին խորհրդարանի նիստի գումարմանը Օպերայի թատրոնի շենքում, ինչին անմիջապես հաջորդեց Երևանում պարետային ժամ հայտարարելը: Այս պլակատում արդեն, հանձին խորհրդային բանակի և իշխանությունների, մատնանշվում էին սոււմգայիթյան ոճրագործությունների իրականացման և կազմակերպման հնարավոր մեղավորներ: Պլակատին պատկերված է յուրատեսակ երկխոսություն արդարադատությունը (զինվորական դատախազություն՝ն) և զինվորական հրամանատարությանը մարմնավորող անձանց միջև: Նրանց արանքում նկարված է «*Организатор*» («Կազմակերպիչ») մակագրությամբ տիեզերանավ հիշեցնող հրթիռ-արկ, որի վերնամասում պատկերված են թուրք/ադրբեջանական ինքնության խորհրդանիշեր ընկալվող կիսալուսին և աստղ: Պլակատի վերնագիրն է՝ «*Достижение отечественной геноцидонавтики*» («Հայրենական ցեղասպանագնացության նվաճումը»): վերջին բառը «*космонавтика*» բառի նմանողությամբ ստեղծված

¹ Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 141-150:

² 1988 թ. նոյեմբերի 24-ին հրավիրվեց Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նիստ: Այն հրավիրվեց գլխավորապես ընտրողների ձևման ներքո և գումարվեց Օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի դահլիճում, քանի որ Գերագույն խորհրդի նախագահությունը նպատակահարմար չէր գտնում նիստի կայացումը՝ քննարկվող հարցերի նկատմամբ այլ վերաբերմունք ունենալու պատճառով: Պատգամավորները մերժեցին ԽՍՀՄ-ում ընտրությունների անցկացման նոր օրինագծի և ԽՍՀՄ Սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելու մասին հրամանագրի ընդունումը՝ նկատի ունենալով դրանց հակաժողովրդական բնույթը: Միաժամանակ որոշվեց, որ այդուհետ Հայաստանում կգործեն կենտրոնական իշխանությունների միայն այն որոշումները, որոնք կարժանանան հանրապետության Գերագույն խորհրդի հավանությանը: ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները այդ նիստն ու նրա ընդունած որոշումները հակասահմանադրական ու ապօրինի համարեցին: Նույն գիշեր Երևանում մտցվեց հատուկ դրություն և պարետային ժամ: Տե՛ս. Ն. Լ. Ազիզբեկյան, Արցախյան շարժման սկզբնավորումն ու ծավալումը (1988 թ. փետրվար - նոյեմբեր). – Լրաբեր հասարակական գիտությունների, 2005, թիվ 2, էջ 57:

արհեստական բառ է: Տիեզերագնացությունը Խորհրդային Միությունում միշտ ներկայացվել է «ձեռքբերումներ» բնութագրիչի ուղեկցությամբ, այնպես որ այս վերնագիրը օրինաչափորեն, խորհրդային լեզվամտածողության հաշվառմամբ ստեղծված արտահայտություն է: Վերնագրի ներքնում պատկերված «Юстиция»-ին («Արդարադատություն») մարմնավորող անձը, ցուցելով հրթիռին, երկխոսության մեջ է մտնում «Командование» («Հրամանատարություն») մակագրությամբ հագուստ կրողի հետ. «- Как быть с этим погромоносителем¹? – На космодроме Сумгаит он очень четко сработал. Следует сохранить его для многоразового использования.» («- Ինչպե՞ս վարվել այս ջարդատարի հետ: - Սումգայիթ տիեզերակայանում այն շատ հստակ գործեց: Անհրաժեշտ է պահպանել այն բազմակի օգտագործման համար»): Այս պլակատը, ուղղակիորեն աղբբեջանցիներին մեղադրելով Սումգայիթում զանգվածային անկարգությունները կազմակերպելու մեջ, որպես նրանց օժանդակողներ մատնացույց է անում շուրջ երկուսուկես օր այդ անկարգություններին չդիմագրավող և այդպիսով դրանց անարգել իրականացմանը նպաստող զինվորականությանը: Այս միտքն իր տրանսպարանտային ուղղակի արտացոլումը գտավ սումգայիթյան իրադարձությունների առաջին տարեդարձի օրը՝ մեկ տարի առաջ տեղ գտածի մասին ուղղակի հարցադրումով՝ «Որտեղ էր այդ ժամանակ սովետական բանակը»:

*

«3 ժամյա ուշացում» ցուցապաստառի տեքստը նույնպես մեջբերում է Մ. Գորբաչովի՝ հուլիսի 18-ին կայացած ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստի ընթացքում ունեցած ռեպլիկից:² Հայաստանի գրողների միության նախագահ Վարդգես Պետրոսյանի ելույթի ժամանակ հնչած սումգայիթյան իրադարձությունները որպես ցեղասպանություն որակելու մտքի դեմ առարկելիս Մ. Գորբաչովն ասաց, թե ի՞նչ ցեղասպանության մասին է խոսքը, երբ մեր զինվորները ուշացել են ընդամենը 3 ժամով: Միանգամից նկատենք, որ ԽՄԿԿ գլխավոր քարտուղարի ասածը չէր համապատասխանում իրականությանը:

Բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ Սումգայիթում մոլեգնող սպանությունների ժամանակ, երբ հայ մարդիկ կամ անգամ աղբբեջանցիները դիմում էին զինվորականների օգնությանը, նրանք պատասխանում էին, թե միջամտելու հրաման չունեն: Փաստերը վկայում են, որ զինվորական լրացուցիչ ստորաբաժանումները Սումգայիթ են մտել դեռևս փետրվարի 28-ին:³ Իսկ մեկ օր անց՝ երեկոյան ժամերին, Սումգայիթում, ըստ պաշտոնական տվյալների, սպանվել էին շուրջ տասը հայեր, ավերվել և թալանվել էին տասնյակ բնակարաններ. միայն 41 Ա թաղամասում այդ օրը հարձակումներին մասնակցել էր շուրջ 400 մարդ: Սումգայիթյան հանցագործներից Ահմեդովի և նրա հանցակիցների դատավարության ընթացքում հնչած վկայություններն այնքան համոզիչ էին, որ ստիպեցին ԽՍՀՄ Գերագույն դատարանին մասնավոր որոշում կայացնել՝ քննելու համար Սումգայիթ մտցված որոշ զինվորական ստորաբաժանումների անգործության հարցը:⁴ Հրապարակախոս Ալեքսանդր Վասիլևսկու պատկերավոր համեմատությամբ, անգլիական նավերը «երեք օրում» կտրեցին Ատլանտյան օվկիանոսը և հասան Արգենտինայի կողմից օկուպացված, Մեծ Բրիտանիային պատկանող Ֆոլկլենդյան կղզիներ և «գրեթե նույնքան պահանջվեց, որպեսզի մեր զորքերը հասնեն Սումգայիթ»:⁵

Այնպես որ ճիշտ կլիներ, եթե Մ. Գորբաչովն օգտագործեր «3-օրյա ուշացում» արտահայտությունը: Իսկ երեք օրը լրիվ բավական է զանգվածային կոտորածներ իրականացնելու համար: Հիշենք, որ երեք օր տևեցին կոտորածներն Ադանայում 1909 թ., ջարդերը Բաքվում 1918 թ. սեպտեմբերին, Շուշիում 1920 թ. ապրիլին ...

Նկատենք, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ հուլիսի 18-ի նիստից հետո արդեն դժվար էր հուսալ, որ սումգայիթյան ոճրագործությունները կգնահատվեն որպես ցեղասպանություն: Բանն այն է, որ երկրի փաստացի ղեկավարն իր խոսքում արդեն նշել էր, որ «Ցեղասպանությունը որոշակի քաղաքականություն է, ռասայական, կազմակերպված և ոչ տարբերային: Իսկ Սումգայիթում վայրագություններ են արել հասարակության թափփուկներ: Պարզվել է, թե ովքեր

¹ Նկատենք, որ այս բառում «б»-ը ավելորդ է:

² Նիստի ընթացքում Միխայիլ Գորբաչովի ռեպլիկների մասին մեր իմացությունը հենված է Կենտրոնական հեռուստատեսությամբ ցուցադրված նիստի խմբագրված տեսագրությանը:

³ Տե՛ս, օրինակ. Сумгаит... Геноцид... Гласность?, с. 45.

⁴ Անդ, էջ 58, 59: Տե՛ս նաև. Сумгаитская трагедия, с. 11, 13, 14.

⁵ Տե՛ս Александр Василевский. Туча в горах. – Аврора, 1988, N 10.

են դրանք: Իսկ ցեղասպանությունը որևէ ժողովրդի կամ փոքրամասնության նկատմամբ գիտակցաբար վարվող ոչնչացման քաղաքականությունն է: Ինչու՞ էք դուք ուզում բանդիտների արարմունքը վերագրել ամբողջ Ադրբեջանին: Ի՞նչ ցեղասպանության մասին կարելի է խոսել»: ¹ Նման որակումներից հետո այն ժամանակների Խորհրդային Միությունում դժվար թե երբևիցե սումգայիթյան իրադարձություններն այլ գնահատականի արժանանային:

Այն փաստը սակայն, որ մարդիկ շարունակում էին Կենտրոնից պահանջել քաղաքական գնահատական սումգայիթյան դեպքերին, վկայում էր, որ այս թեզը քաղաքական պայքարի կարևորագույն մաս է, և դրա արձարձումը օգնում էր քողազերծ անելու Կենտրոնի քաղաքականությունը, իսկ շարքային քաղաքացիներին՝ թողափելու ամիս առ ամիս, օր առ օր հնացող պատկերացումները խորհրդային իրականության մասին:

Խորհրդային և ռուս զինվորականության մասին պատկերացումների փոփոխության գործընթացն աստիճանաբար ձեռք էր բերում նոր երանգներ, ուրույն դրսևորումներ՝ հաճախ արդեն ուղղակիորեն չկապվելով Սումգայիթում և «Չվարթնոց» օդանավակայանում, Ստեփանակերտում նրանց գործողությունների հետ, չնայած և արտածված էին դրանցից: Այսպես, 1988 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Հայաստանից խորհրդային զորքը դուրս հանելու պահանջներն ամրագրված էին հացադուլավորների տեքստերում, իսկ մի տրանսպարանտում օգտագործվում էր խորհրդային քաղաքացուն հեռուստացույցով ամերիկյան զորքերի նկատմամբ տարբեր երկրներում ներկայացվող պահանջը՝ ուղղված, սակայն, խորհրդային զինվորականությանը. «*Soldiers, go back*» («Զինվորներ, հետ գնացեք»): Ապա հաջորդեցին ավելի որոշակի բնորոշումներով տրանսպարանտներ, որտեղ խորհրդային զորքերը որակվում էին որպես «օկուպացիոն»: Այսպես, ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՄՀ Գերագույն խորհրդի նախագահության շենքերի մերձակայքի մետրոյի «Բաղրամյան» կայարանը, որտեղ տեղակայված էին խորհրդային զինվորական ստորաբաժանումները, 1988 թ. հոկտեմբերյան մի պլակատում ներկայացվում էր որպես «*Станция оккупационная*» («Կայարան «Օկուպացիոն»») (նկ. 8), մեկ այլ պլակատում Հայկական ՄՍՀ և ԼՂԻՄ-ի կարմիրով ներկված տարածքը շրջափակված էր զինվորական փշալարերով (նկ. 9), նոյեմբերի 7-ի շքերթի տրանսպարանտներից մեկին ուղղակիորեն գրված էր «*Հայաստանն առանց պատժիչ զորքերի*», իսկ նոյեմբերի 18-ի բազմահազարանոց հանրահավաքի (նկ. 10), ապա և երթի ժամանակ հանդիպեց հետևյալ բովանդակության տրանսպարանտ՝ «*Оккупационные войска, вон из НКАО*» («Օկուպացիոն զորքեր, դուրս ԼՂԻՄ-ից»): 1988 թ. նոյեմբերյան ևս մի պլակատ ցուցում էր խորհրդային բանակային ստորաբաժանումների պրոպագանդային ուղղվածություն ունենալու ժողովրդական ընկալումը. պլակատում խորհրդային տանկը ԼՂԻՄ-ի տարածքը շղթայել էր ու քաշում էր դեպի Ադրբեջանի խորքը (նկ. 11): ²

Խորհրդային զորքերին ամոթանք էին տալիս 1988 թ. նոյեմբերի երկրորդ կեսին, երբ նրանք «չէին կարողանում» կանգնեցնել ադրբեջանցիների հարձակումները Կիրովաբադի հայկական թաղի վրա՝ ³ «*Позор советским войскам*» («Ամոթ խորհրդային զորքերին») (նկ. 12), իսկ սումգայիթյան իրադարձությունների տարեդարձին՝ 1989 թ. փետրվարին, հիշեցնում էին նրանց անգործությունը հայերի կոտորածի ժամանակ՝ «*Որտեղ էր այդ ժամանակ սովետական բանակը*» և կրկին կոչ էր արվում (առկա պարետային ժամի պայմաններում)՝ «*Հայաստանն առանց օկուպացիոն զորքերի*», «*Убирайтесь горбачевские дети из Армении*» («Գորբաչովյան երեխաներ, ռադներդ քաշեք Հայաստանից»), ինչպես նաև ծաղրում էին՝ «*Պատժիչ զորքերը մարդու իրավունքների պաշտպան*» բնութագրմամբ:

Ցուցապաստանների մի ամբողջ շարք ուղղված էր այն բանի նշմանը, որ խորհրդային զորքերը ճնշում են ժողովրդավարական զարգացումները Հայաստանում: Այսպես, 1988 թ. նոյեմբերին պարետային ժամ մտցնելուց մեկ շաբաթ առաջ, Օպերայի հրապարակում հայտնվեց գունագեղ, դեղերը գովազդող ժանրով ստեղծված մի պլակատ (նկ. 13). «*Реклама – Министерство обороны СССР предлагает: витамин БТР! Лучшее средство против свобододемократизма. Не разрешается применять*

¹ ՄՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի ելույթը. – Գրական թերթ, 22 հուլիսի 1988 թ., թիվ 30 (2398):

² Պլակատին ուղեկցում էր հայրենասիրական բնույթի բանաստեղծություն «Եթե հայ ես» վերնագրով, որի հեղինակը յոթերորդ դասարանի աշակերտ էր, ծնունդով դարաբաղցի: Նա էր նաև ողջ պլակատի հեղինակը:

³ Շարքի մանրամասն ներկայացումը տե՛ս. Самооборона армян Кировабада в 1988-1989 гг. глазами очевидцев. Составители Гриша Оганезов, Грануш Харатян. Ереван: Изд-во «Гитутюн», 2014.

без назначения ЦК КПСС. Противопоказания: при применении – в Армении ожидаемых результатов не дает. Побочные действия: народная революция, самоопределение, голодовки, забастовки и т.п. ...» («ԳՌ-վազդ. ԽՍՀՄ պաշտպանության նախարարությունն առաջարկում է վիտամին «Ձրահամեքենա»: Այն լավագույն միջոց է ազատության և ժողովրդավարության դեմ: Չի թույլատրվում օգտագործել առանց ԽՄԿԿ ԿԿ-ի նշանակման: Հակացուցումներ. Հայաստանում օգտագործելու պարագայում սպասվող արդյունքներ չի տալիս: Կողմնակի ներգործություններն են՝ ժողովրդական հեղափոխություն, ինքնորոշում, հացադուլներ, գործադուլներ և այլն...»):

Մի ամբողջ շարք պլակատներ ցուցում էին, որ ԽՍՀՄ-ը աստիճանաբար վեր է ածվում զինված ուժերին հենված բռնապետության: Այսպես, 1988 թ. հոկտեմբերի կեսերի մի պլակատում 1988 թ. «լույս տեսած» «Սահմանադրություն» գրքի (հեղինակը, թերևս, նկատի ուներ փոփոխություններով ու լրացումներով ընդունվելիք ԽՍՀՄ Սահմանադրության նոր խմբագրությունը) կազմին նկարված էին տանկ և մահակ՝ գուրգի հատկանիշներով (նկ. 14), իսկ նոյեմբերի սկզբի պլակատում «Конституция СССР» («ԽՍՀՄ Սահմանադրություն») գրքի միջից տանկ էր դուրս գալիս, նույն ամսվա երկրորդ կեսին առկա մի պլակատում (նկ. 15) Կրեմլից ցուցում ստացող զինվորական գույգ սապոգները Չեխոսլովակիան, Լեհաստանը, Աֆղանստանը անցնելուց հետո ուղղություն են վերցնում դեպի Մասիսները (այսինքն՝ Հայաստան), որոնց առջևի մասում V տառի ձևով բացված մասներ են և բռունցքված ձեռքեր, այսինքն՝ արդար նպատակների համար պայքարող ու հաղթանակի ձգտող ժողովուրդ: Մեկ տարի անց՝ նոյեմբերին, պրոֆեսիոնալ նկարչի կողմից ստեղծված մեկ ուրիշ պլակատում պատկերված էր Ստալինը՝ ողջունի համար աջ ձեռքը վեր բարձրացրած: Նրա ձեռքում սակրավորի բահ էր, այն նույն բահից, որով զինված ներքին զորքերի ստորաբաժանումները 1989 թ. ապրիլի 9-ին սպանեցին Թբիլիսիի ավելի քան մեկ տասնյակ խաղաղ ցուցարարների: Այդ օրերի մեկ այլ, կրկին պրոֆեսիոնալի վրձնին պատկանող պլակատում (նկ. 16) ուղղակիորեն ասվում էր, որ «Сильный центр, сильные республики» («Ուժեղ Կենտրոն, ուժեղ հանրապետություններ») կարգախոսն իրականում նշանակում է խորհրդային հանրապետություններին լոկ ռազմական ուժով մեկ պետության մեջ պահել. պլակատում պատկերված էր զինվորական սապոգ, որի շուրջը դասավորված էին 15 գույգ (խորհրդային հանրապետությունների քանակով) կիսամաշ կոշիկներ: 1989 թ. նոյեմբերի սկզբի մեկ այլ, նույնպես պրոֆեսիոնալ նկարչի (Կարապետ Փաշյան) նկարած մի պլակատ (նկ. 17) ուներ անսովոր վերնագիր՝ «Փոքրիկ կարապների պարը Երևանի «Կարապի լիճը» բալետից»: Այստեղ պատկերված բալետի պարուհիները կրում էին զինվորական սապոգներ՝ ցանկանալով ցուցել խորհրդային զինվորականության ներկայությունը խորհրդային (ու, մասնավորապես, հայաստանյան) հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներում:

Մեկ այլ պլակատի (նկ. 18) համար որպես հիմք է վերցրած ռուս նկարիչ Վ. Մ. Վասնեցովի՝ 1898 թ. ստեղծած «Богатыри» («Դյուցազուններ») գեղանկարը: Վասնեցովի մտահղացմամբ նկարում պատկերված ռուս ձիավոր հսկաները՝ Դոբրինյա Նիկիտիչը, Իլյա Մուրոմեցը և Ալյոշա Պոպովիչը, դուրս են եկել դաշտ և հսկում են, թե «արդյոք չկա՞ թշնամին, արդյոք որևէ մեկին չեն նեղացնում»: Չնայած դյուցազունները տարբեր բնավորություններ ունեն, սակայն նրանք միևնույն ժամանակ ժողովրդական հերոսների գեղարվեստական ընդհանրացումն են, այն է՝ ուժեղ են, համարձակ և արդարամիտ, մարմնավորում են ռուս ժողովրդի հոգևոր և ֆիզիկական բացառիկ որակները:¹ Պլակատի հեղինակը երեք դյուցազուններից թողել է մեկին՝ Իլյա Մուրոմեցին: Մասնագետների գնահատմամբ ռուսական ժողովրդական տիպարի գեղեցկությունն Իլյա Մուրոմեցի կերպարում գտել է կենդանի, վառ դրսևորում. «ամեն ինչում շոշափելիորեն զգացվում է ռուսական ժողովրդական հզորությունը, հանգիստ, վստահ ուժը, իմաստությունը, տոկունությունը և վեհանձնությունը»: Պլակատի հեղինակը ընդամենը մեկ իրի փոփոխության միջոցով՝ գուրգը փոխարինված է ներքին զորքերի հանդերձանքի մաս կազմող զինվորական մահակով, արմատապես փոխել է նկարի բովանդակությունը: Այժմ մեր առջև է հզոր և սպառազեն ռուս զինվորը, որը հսկում է, թե հանկարծ որևէ մեկը չհամարձակվի ընդվզել խորհրդային (ռուսական) կայսրության դեմ: Այդպիսով, արդարամիտ ռուս հսկայի կերպարը վեր է ածվում պատժիչ գործողություններ իրականացնելու պատրաստ ռուս զինվորականի կերպարի, ինչը նաև

¹ Տե՛ս և *Н. Моргунов, Н. Моргунова-Рудницкая*. Виктор Михайлович Васнецов. Жизнь и творчество. М., 1962, с. 341, 342, 347, 348, 355; *Т. Горина, И. Шмидт*. Искусство России с 60-х до 90-х годов 19 века. – В кн.: Всеобщая история искусств. Том V (Искусство 19 века). М., 1964, с. 227.

ուղղակիորեն արտացոլում էր այդ ժամանակներում հայ մարդկանց մեջ տեղ գտնող ռուս զինվորի նկատմամբ ինքնության փոփոխության գործընթացը:

Եվ վերջապես, մեկ ուրիշ պլակատում (*նկ. 19*) պատկերագրորեն նշվում էր, որ «правовое государство» (իրավական պետություն) տարիներ շարունակ տարփողվող հասկացությունն իրականում վեր է ածվել զինվորական հրամաններին ենթարկվող ու հարվածներ հասցնելու պատրաստ զինուժի՝ «*Направо вое зос. yдарство*»:

Խորհրդային բանակում տիրող ոչ ֆորմալ հարաբերությունների ու ազգամիջյան կոնֆլիկտների հետևանքով խաղաղ ժամանակներում միշտ էլ հայ զինվորներ էին զոհվում: Նման դեպքեր արձանագրվում էին նաև Շարժման տարիներին: Այս հանգամանքը, ինչպես նաև խորհրդային բանակի գործողություններին դիմագրավելու անհրաժեշտության, նաև անկախության աստիճանաբար հասունացող գաղափարը մարդկանց դրդում էին 1989 թ. ամռանն ու աշնանը պահանջներ ներկայացնել, նախ, որ հայազգի զինվորները ծառայեն Հայաստանի տարածքում («*Հայ զավակները պետք է ծառայեն միայն Հայաստանում*» (*նկ. 20*), «*Ոչմի՛ հայ զինվոր զավթողական բանակում*»¹ (*նկ. 21*) և այլն), ապա և ստեղծվի հայկական բանակ («*Հայաստանի փրկությունը ազգի բանակի մեջ է*» (*նկ. 20*), «*Հայ զինվորին հայ բանակ*» (*նկ. 21*):

Ինչպես տեսնում ենք, արտածվելով սուսգայիթյան իրադարձություններում խորհրդային բանակային ստորաբաժանումների խաղացած դերի, «Զվարթնոց» օդանավակայանում ու նրա շրջակայքում նրա կիրառած ճնշիչ գործողությունների, Ստեփանակերտում հայ բնակչության դեմ բռնություններ ձեռնարկելու փաստերի առթիվ ձևավորված գնահատականներից, վերաբերմունքը խորհրդային զորամիավորումների նկատմամբ աստիճանաբար սկսում է դիտարկվել ավելի լայն համատեքստում՝ որպես ԽՍՀՄ-ում ժողովրդավարական զարգացումների խոչընդոտ և ձևավորվող բռնապետության գլխավոր հենարան ու գործիք: Արդյունքում, ինչպես սկզբում նշել էինք, խորհրդային բանակի ու նրա հիմքը կազմող ռուս զինվորի առաջադեմ ու փրկարար դերի մասին կարծրատիպը փոխվում է այն աստիճան, որ խնդիր է դրվում «*Ետ կանչել խորհրդային բանակում ծառայող հայորդիներին, որպեսզի նրանք ծառայությունը շարունակեն Խորհրդային Հայաստանում*» (օգոստոս, 1989 թ.), խորհրդային բանակը սկսում է որակվել որպես «պատժիչ», «զավթիչ», արդյունքում հասունանում է հայկական բանակ ստեղծելու անհրաժեշտության գաղափարը, քանի որ խորհրդային բանակային զորամիավորումներն այլևս դադարում են դիտվել որպես հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգությունը երաշխավորողներ: Ասվածի անուղղակի վկայություններից է 1989 թ. ստեղծված մի պլակատ, որտեղ քարերին նստած, արձանի ձևով պատկերված, թևերին խորհրդային խորհրդանշաններով, ասես մտածմունքի մեջ գտնվող մանուկ հրեշտակի գլխին զինվորական սաղավարտ է «*Окаменелое безразличие ангела-хранителя*» («Պահապան հրեշտակի քարացած անտարբերությունը») (*նկ. 22*) մակագրությամբ:

¹ «Ոչմի՛» բառն իրականում գրվում է «ոչ մի» ձևով:



1. Դրվագ «Ձվարթնոցի» դեպքերի ժամանակ գոհված Խաչիկ Ջաքարյանի թաղումից: Երևան, Բաղրամյանի պողոտա, 8 հուլիսի 1988 թ.: Լուս.-ը Մ. Վարդանյանի: Արտապատկերված է Մ. Վարդանյանի «Սկիզբ. Երևան 1988» ֆոտոալբոմից (Շարջա, 1998), էջ 54:




2. Դրվագ «Ձվարթնոցի» դեպքերի ժամանակ գոհված Խաչիկ Ջաքարյանի թաղումից: Օպերայի հրապարակ, 8 հուլիսի 1988 թ.: Լուս.-ը Մ. Վարդանյանի: Արտապատկերված է Մ. Վարդանյանի «Սկիզբ. Երևան 1988» ֆոտոալբոմից, էջ 56:



3. Դրվագ «Ձվարթնոցի» դեպքերի ժամանակ գոհված Խաչիկ Ջաքարյանի թաղումից: Լուս.-ը Մ. Վարդանյանի: Արտապատկերված է Մ. Վարդանյանի «Սկիզբ. Երևան 1988» ֆոտոալբոմից, էջ 55:



4. Օպերայի հրապարակ, 18 նոյեմբերի 1988 թ.: Լուս.-ը Հ. Մարությանի:



5. Օպերայի հրապարակ, 24 նոյեմբերի 1988 թ.: Լուս.-ը Հ. Մարությանի:



6. Օպերայի հրապարակ, հուլիս 1988 թ.: Լուս.-ը Հ. Մարությանի:



7. Դրվագ շքերթից: Երևան, Լենինի պողոտա, 7 նոյեմբերի 1988 թ.: Լուս.-ը Հ. Մարությանի:




8. Օպերայի հրապարակ, 13 հոկտեմբերի 1988 թ.: Լուս.-ը Հ. Մարության:



9. Օպերայի հրապարակ, 13 հոկտեմբերի 1988 թ.: Լուս.-ը Հ. Մարությանի:




10. Դրվագ հանրահավաքից: Օպերայի հրապարակ, 18 նոյեմբերի 1988 թ.: Լուս.-ը Հ. Մարությանի:




11. Օպերայի հրապարակ, 18-19 նոյեմբերի 1988 թ.: Լուս.-ը Հ. Մարությանի:



12. Հանրահավաք Օպերայի հրապարակում: 18 նոյեմբերի 1988 թ.: Լուս.-ը Հ. Մարությանի:



13. Օպերայի հրապարակ, 18-19 նոյեմբերի 1988 թ.:



14. Օպերայի հրապարակ, 13 հոկտեմբերի 1988 թ.:
Լուս.-ը չ. Մարությանի:
Լուս.-ը չ. Մարությանի:



15. Օպերայի հրապարակ, 18-19 նոյեմբերի 1988 թ.:
Լուս.-ը չ. Մարությանի:



16. Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) առաջին համագումարի ժամանակ կազմակերպված պլակատի ցուցահանդես, 4 նոյեմբերի 1989 թ.:
Լուս.-ը չ. Մարությանի:



17. ՀՀՇ առաջին համագումարի ժամանակ կազմակերպված պլակատի ցուցահանդես, 4 նոյեմբերի 1989 թ.: Լուս.-ը չ. Մարությանի:



18. Ղարաբաղյան շարժման սկզբնավորման երկամյակին նվիրված ցուցահանդես Հայաստանի ազգագրության պետական թանգարանում (ՀԱՊԹ), մարտ 1990 թ.: Լուս.-ը չ. Մարությանի:



19. ՀՀ առաջին համագումարի ժամանակ կազմակերպված պլակատի ցուցահանդես, 4 նոյեմբերի 1989 թ.: Լուս.-ը Հ. Մարությանի:



20. Օպերայի հրապարակ, 15 օգոստոսի 1989թ.: Լուս.-ը Հ. Մարությանի:



21. Օպերայի հրապարակ, 15 օգոստոսի 1989թ.: Լուս.-ը Հ. Մարությանի:



22. Ղարաբաղյան շարժման սկզբնավորման երկամյակին նվիրված ցուցահանդես ՀԱՊԹ-ում, մարտ 1990 թ.: Լուս.-ը Հ. Մարությանի: